ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ

ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ 1913–1915 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի պարտությամբ նպաստավոր պայմաններ են ստեղծվում Հայկական հարցի վերարծարծման համար: 1912 թ. նոյեմբերին եգիպտահայ նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշան նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ՝ եվրոպական ղեկավար շրջանների մոտ արևմտահայերի արդարացի պահանջները ներկայացնելու համար: Ստանձնելով այդ առաքելությունը՝ նա ծեռնամուխ է լինում ակտիվ դիվանագիտական աշխատանքի՝ ի պաշտպանություն Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման:

Տերությունների ղեկավար շրջանների մոտ Հայկական հարցի լուծմանը հետամուտ լինելով՝ Պողոս Նուբարը միաժամանակ արևմտահայությանը կոչ էր անում հեռու մնալ Թուրքիայի դեմ ապստամբական ու զինված ելույթներից՝ համարելով, որ դրանք կարող են մեծապես վնասել հետապնդվող խնդրի լուծմանը: «Պետք է բացարձակապես զգուշանալ այնպիսի քայլերից և մինչև անգամ մտածումներից, որոնք կարող են որևէ կերպ արգելք հանդիսանալ գործին», - հայտարարում էր նա[1]: Պողոս Նուբարը համոզված էր, որ տվյալ պահին ապստամբական շարժումներն թուրքերի համար կարող էին առիթ հանդիսանալ՝ իրագործելու արևմտահայության բնաջնջման իրենց վաղեմի երազանքները, իսկ տերություններին կհարկադրեին վերապահումով մոտենալ Հայկական հարցի կարգավորմանը: «Պողոս Նուպարը, - գրում էր Ե. Օտյանը, - առաջին վայրկեանէն դատապարտած է հեղափոխական տարրերու գործունեութեան եղանակը, զոր ազգին համար վնասակար գտած է»[2]: Այդ էր պատճառը, որ նա մերժում էր արևմտահայության ապստամբական և հեղափոխական

---

[1] «Ազգ», Բոստոն, 1913, N 35:
[2] Օտեան Ե., Պողոս Փաշա Նուպար (կենսագրական նօթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 16:

շարժումները նյութապես օժանդակելու խնդրանքներով իրեն՝ որպես մեծահարուստի, արվող դիմումները: «Ինչ որ ինե կպահանջեն՝ զայն ամբողջապես պիտի տամ ազգին, - ասում էր Պողոս Նուբարը, - ցույց տալու համար թե դրամը խնայել չեմ ուզեր, այլ այդ ուղղությունն է որ կը դատապարտեմ ու չեմ քաջալերեր»[3]:

Բացասաբար վերաբերվելով արևմտահայության զինված ելույթներին՝ Պողոս Նուբարը հաշվի էր առել նաև տվյալ պատմական ժամանակահատվածում ստեղծված անբարենպաստ պայմանները: Առաջին հերթին զինված պայքարին տրամադիր և պատրաստ չէր արևմտահայությունը: «Հայկական հարցի արծարծման բնորոշ արտահայտություններից է այն, - 1913 թ. համարներից մեկում գրում էր «Մշակ» թերթը, - որ աննպատակահարմար են ճանաչված ապստամբական ակտիվ շարժումները, որոնք ժամանակակից պայմաններում չէին կարող համապատասխանել թուրքահայերի բռնած դիրքերին և նրանց կյանքի պայմաններին»[4]: Այդ էր վկայում նաև 1912 թ. դեկտեմբերի վերջերին Կ. Պոլիս այցելած եգիպտահայ գործիչ Վ. Մալեզյանը՝ Պողոս Նուբարին հղած նամակում. «Թուրքիոյ մեր բոլոր հայրենակիցները, առանց դաւանական, կուսակցական եւ այլ խտրութեան, հակառակ են զինեալ ապստամբութեան մը՝ ներկայ անդոհալից շրջանին»[5]:

Արևմտահայության ապստամբական շարժումներին դեմ էին նաև մեծ տերությունները, որոնք, հատկապես Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթների կորստից հետո, իրենց բոլոր ջանքերը գործադրում էին նրա տարածքային ամբողջականությունը պահպանելու և նոր բարդություններից ու բախումներից խուսափելու համար: Ուստի՝ զինված ելույթները ոչ միայն չէին արժանանա տերությունների ղեկավար շրջանների համակրանքին, այլև կվնասեին բարենորոգումների խնդրին, որի լուծման համար հայությունը դիմել էր նրանց օժանդակությանը: «Ես համոզված էի, - Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին հետագայում գրում էր Պողոս Նուբարը, - որ Եվրոպան, մտահոգված լինելով իր քաղաքական և տնտեսական շահե-

---

[3] Օտյան Ե., Երկերի ժողովածու, հտ. 4, Երևան, 1962, էջ 376:
[4] «Մշակ», Թիֆլիս, 1913, N 1:
[5] Մալէզեան Վ., Ճամբուս ծայրը, հտ. Բ, Փարիզ, 1955, էջ 227:

րով, ուշադրություն չէր դարձնի մեր տկարության վրա և միայնակ կթողներ մեզ մեր կեղեքիչների դեմ»[6]:

Վերոհիշյալ խնդրում Պողոս Նուբարի դիրքորոշումը որոշ գործիչների կողմից քննադատության է ենթարկվել: Այսպես, Ս.-Դ. Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ս. Սապահ-Գյուլյանը մեղադրում էր վերջինիս «Երկաթե Շերեփի (հեղինակը նկատի ուներ Խրիմյան Հայրիկի այլախոսությունը – Հ. Բ.) և հեղափոխական շարժման գաղափարների պաշտպանությամբ» հանդես չգալու համար[7]: Այդ մեղադրանքն անհիմն էր մի շարք պատճառներով: Եթե նույնիսկ մի կողմ դնենք և հաշվի չառնենք այդ ժամանակ հեղափոխական շարժման համար ստեղծված անբարենպաստ պայմանները, ապա առաջին հերթին Պողոս Նուբարն իրավասու չէր հանդես գալ նման դիրքերից, քանի որ նրան՝ որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցչի, հանձնարարված էր տերությունների ղեկավար շրջանների մոտ պաշտպանել բարենորոգումների իրականացման պահանջները: Երկրորդ, Պողոս Նուբարի նման կեցվածքն ամբողջովին անիմաստ կդարձներ և կխափաներ Ազգային Պատվիրակության գործունեությունը: Եվ, վերջապես, երրորդ, Պողոս Նուբարը չէր, որ եվրոպական մայրաքաղաքներից պետք է հեղափոխական շարժման կոչեր աներ, այլ հայ քաղաքական և կուսակցական ղեկավար շրջանները, այդ թվում նաև Ս.-Դ. Հնչակյան կուսակցության առաջնորդները, որ պետք է տեղերում աշխատանք տանեին նման շարժում կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:

Թուրքիայի դեմ զինված ապստամբություն բարձրացնելու խնդրում Պողոս Նուբարի դիրքորոշումն իր արտահայտությունը գտավ 1913 թ. սկզբներին Կիլիկիայում ծավալվող իրադարձություններում: Օգտվելով Բալկանյան պատերազմի հետևանքով առաջացած բարենպաստ պայմաններից՝ հայ գործիչներ Մ.Տամատյանն ու Պ. Օհանյանը Կահիրեում ստեղծում են Ազգային Պաշտպանության կոմիտե, որի նպատակն էր Կիլիկիայում թուրքական իշխանությունների դեմ զինված ապստամբության կազմակերպել: Այդ խնդրում իր

---

[6] Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915–1918, ed. by V. Ghazarian, Waltham, 1996, p. 14.

[7] Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Բեյրութ, 1974, էջ 133–134:

աջակցությունն էր հայտնել նաև հունական կառավարությունը՝ խոստանալով ռազմական օգնություն ցույց տալ կիլիկիահայությանը: Մ. Տամատյանի խնդրանքով ապստամբության ղեկավարությունը ստանձնում է Աղանայի հայոց նախկին առաջնորդ Մուշեղ Սերոբյանը, որն այդ նպատակով Ամերիկայից մեկնում է Եգիպտոս: Սրա հետ մեկտեղ աշխատանք էր տարվում ապստամբության համար դրամական միջոցների հայթայթման ուղղությամբ: Սակայն շուտով պարզ է դառնում, որ, դեռևս չսկսված, ապստամբությունն արդեն դատապարտված էր անհաջողության: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Առաջին հերթին գրեթե բացակայում էր զինված պայքարի նկատմամբ կիլիկիահայության միասնական ոգին, պատրաստվածությունն ու տրամադրվածությունը, մի հանգամանք, որը նման գործի հաջողության հիմնական գրավականն էր: «Յեղափոխութեան և ապստամբութեան գետին չկար, - հետագայում խոստովանում էր Մ. Սերոբյանը: - Հակառակ տրուած հաւաստումներու՝ կատարուելիքը պիտի ըլլար արուեստական յեղափոխութիւն մը»[8]: Երկրորդ, ապստամբության նախապատրաստական աշխատանքները կատարվել էին խիստ բացահայտ և չէին վրիպել թուրքական իշխանությունների ուշադրությունից: Երրորդ, ռազմական օգնություն խոստանալով և դրանով նպաստելով Կիլիկիայում ապստամբությանը՝ հունական կառավարությունը հետապնդում էր իր շահերը. երկրում առաջացած ներքին խռովությունը կհարկադրեր թուրքական իշխանություններին որոշակի զիջումների գնալ հույների հետ այդ պահին ընթացող խաղաղության բանակցություններում: «Մեր աղեկության համար չէ հունաց առաջարկած աջակցությունը», - Ա. Չոպանյանին հղած նամակում 1913 թ. փետրվարի 5-ի գրում էր Ազգային պատվիրակության անդամ Հ. Մոստիչյանը[9]: Նման անբարենպաստ պայմաններում զինված պայքարը, բնականաբար, չէր կարող պսակվել հաջողությամբ, և ոչ միայն կխափաներ բարենորոգումների իրագործման շուրջ տարվող բանակցությունները, այլև կիլիկիահայության կոտորածի պատճառ կհանդիսանար:

---

[8] Սերոբեան Մ., Դիտումներ և դատումներ (էջեր օրագրէս), Պէյրութ, 1932, էջ 80:
[9] ՀՀ ԳԱԹ, Ա. Չոպանյանի Ֆ., գ. 4758, թ. 1:

Կիլիկիահայության ապստամբության փորձերը դատապարտվում են Պողոս Նուբարի ղեկավարությամբ գործող Ազգային Պատվիրակության կողմից և որոշում է կայացվում դիմումներ հղել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին, Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին, Մ. Սերոբյանին, Կահիրեի և Ալեքսանդրիայի Քաղաքային ժողովներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելու գինված ելույթի աղետալի հետևանքների վրա: «Նմանօրինակ շարժում մը, - Մ. Սերոբյանին հղած 1913 թ. փետրվարի 7-ի նամակում ընդգծում էր Պողոս Նուբարը, - բնոյթ ունի անվրիպելիօրէն վտանգելու մեր դատը, և պատուիրակութեան պաշտօնը դարձնելու դժուար, չըսելու համար անհնար»[10]:

Նման բացասական արձագանքները չէին կարող անտեսվել և հաշվի չառնվել ապստամբության կազմակերպիչների կողմից: Բոլոր հանգամանքներն ուսումնասիրելով՝ Մ. Սերոբյանը ևս գալիս է այն համոզման, որ ծրագրված շարժումը չի կարող հաջողություն ունենալ, և հրաժարվում է այն կազմակերպելուց: «Այս ծախող պարագաներու տակ, - ասում էր նա, - շարժումը՝ ազգային ինքնասպանություն է»[11]:

Այսպիսով, ձախողվում է Կիլիկիայում թուրքական իշխանությունների դեմ գինված ապստամբության բարձրացման փորձը, որը ստեղծված անբարենպաստ պայմանների բերումով կարող էր աղետաբեր հետևանքներ ունենալ հայության համար: «Շնորհիվ հայ ղեկավար շրջանների ջանքերի, - գրում էր Պողոս Նուբարը, - այդ ծրագիրը բարեբախտաբար վիժեց, և մենք, անկասկած, շահեցինք տերությունների համակրանքը»[12]:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկմամբ և դրանում Թուրքիայի ներգրավմամբ նոր հնարավորություններ ստեղծվեցին Հայկական հարցի լուծման համար: Հայ քաղաքական շրջանների կողմից կազմակերպվեցին կամավորական գնդեր, որոնք ռուսական բանակի կազմում պետք է մասնակցեին Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Նման պայմաններում փոփոխություն են կրում նաև Պողոս Նուբարի մոտեցումները: Եթե մինչպատերազմական շրջանում նա հանդես էր գալիս արևմտահայերի գինված պայքարի դեմ՝

---

[10] Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 79:
[11] ՀՀ Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆ., գ. 6557, թ. 3:
[12] Nubar B., Note sur la Question Armenienne, Paris, 1916, p. 10.

համարելով, որ դա կխափանի բարենորոգումների իրականացման շուրջ ընթացող բանակցությունները, ապա ստեղծված նոր իրավիճակում ողջունում է կամավորական շարժման կազմակերպումը: «Կամավորները, մարտնչելով դաշնակից երկրների կողքին, ուժ կտան մեր դատին և նոր իրավունքներ կստեղծեն մեզ համար: Այսպիսով մեր ձայնն ավելի ուժեղ կլինի, երբ ժամանակը գա ձևակերպելու մեր արդարացի և համեստ պահանջները»,- 1915 թ. ապրիլ 7-ին Մ.Վարանդյանին հղած նամակում գրում էր Պողոս Նուբարը[13]:

Որոշակի վստահություն ունենալով, որ Արևմտյան Հայաստանը կազատագրվի ռուսական բանակի կողմից, Պողոս Նուբարն անհանգիստ էր հատկապես Կիլիկիահայության ճակատագրով, որին սպառնում էր կոտորածի վտանգը: Իր այս մտահոգությունները նա ներկայացնում է «Պատերազմը և Կիլիկիահայությունը» հուշագրում, որում ընդգծում է Կիլիկիային ինքնավարություն շնորհելու կամ դաշնակից երկրներից որևէ մեկի կազմի մեջ ներառելու անհրաժեշտությունը[14]:

Թուրքիայի՝ Եռյակ միության կազմում պատերազմի մեջ մտնելուց հետո, Մեծ Բրիտանիայի զինված ուժերի գլխավոր շտաբում ռազմական նախարար Հ. Քիթչենների գլխավորությամբ մշակվում է մի ծրագիր, ըստ որի 1915 թ. սկզբներին նախատեսվում էր զորքերի ափհանում կատարել Ալեքսանդրետի ծոցի շրջանում (Սիրիա, Կիլիկիա), այնտեղից էլ շարժվելով հյուսիս-արևելք միանալ, ռուսական բանակին[15]: Այդ ծրագրի իրականացմամբ դաշնակից երկրները ջախջախիչ հարված կհասցնեին Օսմանյան կայսրությանը:

Անգլիական ռազմական ղեկավարության մշակած այդ ծրագիրը մեծ ոգևորություն և հույսեր արթնացրեց Պողոս Նուբարի մոտ, քանզի նա գիտակցում էր, որ դաշնակից զորքերի ներկայությունը Կիլիկիայում կերաշխավորեր տեղի հայության անվտանգությունը թուրք ջարդարարներից: Սրա հետ մեկտեղ, Պողոս Նուբարը գտնում էր, որ Կիլիկիահայությունն անպայման պետք է օգտվի այդ պատեհ առիթից՝ ապստամբություն բարձրացնելով և անգլիական զորքերի օգ-

---

[13] Boghos Nubar's Papers ..., p. 9.

[14] Նույն տեղում, էջ 5:

[15] Barker A. J., The Bastard War: The Mesopotamian Campaign of 1914–1917, New York, 1967, p. 409.

նությամբ ազատագրվելով թուրքական տիրապետությունից: «Անգլիացիների ափհանումը Կիլիկիայում խթան կհանդիսանա ապստամբություն բարձրացնելու համար, որն էլ կնպաստի մեր ազգային իղձերի իրականացմանը», - Գևորգ Ե-ին հղած 1915 թ. հուլիսի 18-ի նամակում գրում էր Պողոս Նուբարը[16]: Իսկ Կիլիկիայի Սահակ կաթողիկոսին հղած 1915 թ. ապրիլի 17-ի նամակում, կարևորելով սեփական իրավունքների համար պայքար մղելը, նա գրում էր. «Յուրաքանչյուր ճնշված ժողովուրդ որոշակի պարտականություններ ունի կատարելու, որպեսզի արժանի լինի ազատագրման»[17]:

1914 թ. նոյեմբերին Պողոս Նուբարը հանդիպում է Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար Ջոն Մաքսվելին և քննարկում կիլիկիահայության կողմից անգլիական էքսպեդիցիային աջակցություն ցուցաբերելու հարցը: Պողոս Նուբարն իր զրուցակցին հավաստիացնում է, որ կիլիկիահայությունը հնարավոր օժանդակությունը կցուցաբերի անգլիական զորքերին և նրանցից զենք ու զինամթերք ստանալու դեպքում միահամուռ կերպով ապստամբություն կբարձրացնի թուրքական իշխանությունների դեմ[18]: «Աջակցությունը դաշնակից զորքերին չպետք է սահմանափակվի միայն ջերմ ընդունելությամբ և որոշ փոքր ծառայությունների մատուցմամբ»,- Սահակ կաթողիկոսին հղած նամակում գրում էր Պողոս Նուբարը՝ հատուկ կարևորելով զինված ապստամբություն բարձրացնելու հանգամանքը[19]: Դաշնակից երկրների օժանդակությամբ կիլիկիահայերի՝ ապստամբություն բարձրացնելու հնարավորության մասին նշում էր նաև Վ. Մալեզյանը Ջ. Մաքսվելին 1915 թ. հուլիսին հղած ծանուցագրում[20]: Անգլիացի ռազմական բարձրաստիճան պաշտոնյայի հետ հանդիպմանը Պողոս Նուբարը միաժամանակ հույս է հայտնում, որ Մեծ Բրիտանիայի կողմից Կիլիկիայի գրավումը ժամանակավոր բնույթ չի կրի, և կիլիկիահայությունն այլևս չի հայտնվի թուրքական տիրապետության տակ: Հանդիպման վերջում,

---

[16] Boghos Nubar's Papers ..., p. 212.
[17] Նույն տեղում, էջ 15:
[18] ՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 45:
[19] Boghos Nubar's Papers ..., p. 15.
[20] Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հտ. 1, Երևան, 2005, էջ 190:

ընդգծելու համար Կիլիկիայի հայ բնակչության ազատատենչ ոգին և որպես նրանց ռազմական տաղանդի ցայտուն օրինակ, Պողոս Նուբարը հիշատակում է Զեյթունի 1895 թ. ապստամբությունը[21]:

Սակայն, դժբախտաբար, անգլիական զորքերի՝ Ալեքսանդրետի շրջան նախատեսված ափհանումը չիրագործվեց: Դրա փոխարեն, Մեծ Բրիտանիայի ռազմածովային նախարար Ու. Չերչիլի նախաձեռնությամբ և առաջարկով որոշվեց անգլիական և ֆրանսիական զինված ուժերի մասնակցությամբ իրականացնել Դարդանելի ռազմական օպերացիան, որի նպատակը սևծովյան նեղուցների և Կ. Պոլսի գրավումն էր[22]: Անգլիական զորքերի ծրագրված ափհանումը Կիլիկիա և Սիրիա չիրականացվեց հիմնականում Ֆրանսիայի դիրքորոշման պատճառով: Սիրիայում՝ հսկայական տնտեսական և քաղաքական շահեր ունենալով՝ Ֆրանսիան չէր կարող թույլ տալ անգլիական ազդեցության հաստատումն ու ուժեղացումը տարածաշրջանում: Այդ իսկ պատճառով Անգլիան հրաժարվում է իր այդ նախագծից՝ փոխարենը ստանալով Ֆրանսիայի համաձայնությունը մասնակցել Դարդանելի ռազմական օպերացիային[23]:

Փաստորեն, անգլիական զորքերի սպասված ափհանումը չիրականացավ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին անարգել կազմակերպել կիլիկիահայության կոտորածը:

1915 թ. հուլիսին Հայկական հարցի լուծմանն ի նպաստ ծավալած գործունեության շրջանակներում այցելելով Լոնդոն Պողոս Նուբարը հանդիպում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Նիկոլսոնի հետ և հետաքրքրվում անգլիական զորքերի Կիլիկիա ափհանման հնարավորության մասին: Ի պատասխան՝ անգլիական պաշտոնյան հայտնում է, որ դա անհնարին է, քանի որ այդ պահին դաշնակից երկրների ամբողջ ուժերը ներգրավված են Դարդանելի ռազմական օպերացիայում[24]: «Եթե մենք սպասենք մինչև Կ.Պոլսի պաշարումն ու դաշնակից զորքերի ափհանումը Կիլիկիա,

---

[21] Boghos Nubar's Papers ..., p. 5.

[22] Դարդանելի ռազմական օպերացիան, որը սկսվեց 1915 թ. փետրվարի 19-ին և տևեց մոտ մեկ տարի, ավարտվում է ձախողմամբ և դաշնակից զորքերի պարտությամբ:

[23] Готлиб В. В., Тайная дипломатия во время первой мировой войны, Москва, 1960, с. 115.

[24] Boghos Nubar's Papers ..., p. 142.

այնտեղ այլևս ոչ մի հայ չի մնա», - հուսահատորեն նշում էր Պողոս Նուբարը Գևորգ Ե կաթողիկոսին հղած հուլիսի 18-ի նամակում[25]:

Այսպիսով, համակերպվելով ստեղծված իրավիճակի հետ, Պողոս Նուբարին մնում էր իր ջանքերն ուղղել կիլիկիահայությանը թուրքական դաժան լծից ազատագրելու այլ հնարավորությունների որոնմանը:

HOVAKIM BOYADJYAN

BOGHOS NUBAR PASHA AND THE QUESTION OF REBELLION OF CILICIAN ARMENIANS IN 1913–1915

SUMMARY

Defending the Armenian question, Boghos Nubar called Western Armenians to refrain from raising an armed rebellion against the Turkish government, which could harm the implementation of reforms in Western Armenia. Thus he opposed efforts by some figures to stage a rebellion of Cilician Armenians, which for a number of objective reasons, was doomed to failure. With the outbreak of World War I, Boghos Nubar's views on this subject had changed. Upon learning about the upcoming landing of British troops in Cilicia (at the begining of 1915), Boghos Nubar believed that Cilician Armenians should take advantage of suitable moment, raise a rebellion and provide all possible support to British troops.

[25] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 46:

ОВАКИМ БОЯДЖЯН

ПОГОС НУБАР ПАША И ВОПРОС ПОДНЯТИЯ ВОССТАНИЯ КИЛИКИЙСКИМИ АРМЯНАМИ В 1913–1915 ГОДАХ

РЕЗЮМЕ

Выступая в защиту Армянского вопроса Погос Нубар призывал западных армян воздержаться от поднятия вооруженного восстания против турецких властей, что могло навредить делу осуществления реформ в Западной Армении. Он выступил против попыток некоторых деятелей организовать восстание киликийских армян, которое по ряду объективных причин было обречено на провал. С началом Первой мировой войны взгляды Погоса Нубара изменились. Узнав о готовящейся высадке английского десанта в Киликии в начале 1915 г., Погос Нубар полагал, что киликийские армяне должны воспользоваться подходящим моментом, поднять восстание и оказать всяческую поддержку английским войскам.